տիվի անունից հավաստիացրին, որ կանեն ամեն ինչ, հայրենի գիտության հետագա զարգացման ու բարգավաճման համար: Վերջում ընթերցվեցին ՍՍՀՄ ԳԱ նախագահությունից, ՀՍՍՀ ԳԱ նախագահությունից ու միութենական հանրապետություններից պատմության ինստիտուտի հասցեով ստացված բազմաթիվ շնորհավորագրեր:

Ժողովի մասնակիցները միաձայն ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ ԿԿ-ին, ՍՍՀՄ Մինիստրների սովետին, ՍՍՀՄ Գերագույն սովետին ու ՀԱՄԿԽ-ին, ինչպես նաև ՀԿԿ Կենտկոմին, ՀՍՍՀ Մինիստրների սովետին, ՀՍՍՀ Գերագույն սովետին և ՀԱՄԽ-ին:

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 25-ԱՄՅԱԿԻՆ

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի մայիսի 6-ի գիտական նստաշրջանը նվիրված էր Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 25-ամյակին: Բացելով նիստը, ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Գալոյանն անդրադարձավ ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակի պատմական նշանակությանը:

«Սովետական Միության դերը հակաֆաշիստական բլոկի հաղթանակի գործում» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանը: Զեկուցողը ցույց տվեց, որ երկրորդ համաշխարհային պատերազմում ՍՍՀՄ խաղացած վճռական դերով էին պայմանավորված իմպերիալիստական պատերազմի վերաճումը ազատագրականի, ֆաշիստների կողմից օկուպացված երկրներում ծավալված դիմադրական շարժումները և մի շարք ժողովուրդների ու պետությունների հակահիտլերյան կոալիցիայի ստեղծումն ու ամրապնդումը: Այնուհետև պրոֆ. Ա. Մ. Հակոբյանը քննադատեց ֆաշիզմի ջախջախման գործում Սովետական Միության դերը նսեմացնող արևմտյան ռազմագետներին ու պատմաբաններին:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ն. Մնացականյանի զեկուցումը նվիրված էր հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին: Զեկուցողը նշեց, որ հայ ժողովուրդը թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում իր ուժերի գերագույն լարումով մասնակցեց Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմին, դրսևորելով իր բարոյական բարձր հատկանիշները: Նրա խիզախ զավակներն երբեք այնպիսի զանգվածային հերոսություններ չէին կատարել, ինչպես մեծ Հայրենականի օրերին: Նրանցից 106-ը արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչման, ավելի քան 66. 802 հայ ռազմիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով: Զեկուցման վերջում պրոֆ. Ա. Ն. Մնացականյանը խոսեց Հայրենական մեծ պատերազմում Սովետական Հայաստանի թիկունքի աշխատավորության ներդրած ավանդների մասին:

Հայրենական մեծ պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակում մեծ ու փաստավոր է եղել նաև պարտիզանական շարժման դերը,— նշեց պատմական գիտությունների թեկնածու Ե. Մ. Խալեյանը: Պարտիզանական շարժումը համարելով հայ ժողովրդի գոյատևման դարավոր այլայքարի հիմնական ձև, զեկուցողը ցույց տվեց, որ 1941—1945 թթ. մեծ թվով հայ պարտիզաններ մարտնչել են Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում: Ապա, նա անդրադարձավ հայկական առանձին պարտիզանական ջոկատների ստեղծմանը և հայ պարտիզանների քաջագործություններին:

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ